րէին, թէ Յորժամ դարձցիս և ծերեսցես և յոգւոց հանցես՝ ապա գիտասցես թէ ուր իցես. սկսաւ այնուհետեւ կոծել զկուրծս իւր՝ լալով և ողբալով, վա՜յ և եղուկ զանձն իւր կարդալով՝ վասն անգիւտ կորստեան անձինն իւրոյ. Հարցանէր ցգիտունս գրոց և ցհմուտս օրինացն Աստուծոյ, թէ արդեօք իցէ՞ դեղ անբժշկելի ցաւոյս, և կամ հնար զերծանելոյ յ'անել գրոյ կորստեանս։ Պատասխանի ետուն նմա և ասեն, թէ, Չիք քեզ հնար բժշկութիւն գտանել դառն վիրիդ կամ արձակել յանխզելի կապանացդ, բայց միայն թէ ուղեւորիս ընդ երկայն ճանապարհ որ տանի ի գլուխն տիեզերաց ի մեծն Հռոմ, ուր են Սուրբ Առաքեալքն Պաւղոս և Պետրոս, սիւնք եկեղեցւոյ, արձակողքն կապելոց և տուողքն կենդանութեան. նոքա կարեն արձակել զքեզ ի հիւանդութենէդ քումմէ. ընթացիր վաղվաղակի։

Զայս լուեալ նորա՝ ջերմեռանդն սրտիւ հառաչագին արտասուօք անյապաղաբար յուղի անկեալ, առ ոչինչ համարելով զանհնարին երկայնութիւն ճանապարհին, վաճառեալ զամենայն ինչս իւր, ընդ իւր տանելով թոշակ առ ի պէտս առաջի եղեալ ճանապարհին. յաջողեալ նմա ի Հոգւոյն Սրբոյ շնորհաց, ըստ մեծահաւատ աշխատութեանն իւրոյ՝ եհաս ի թագաւորեալ քաղաքն ի մեծն Հռովմ. դիմեալ յերկնանման սուրբ եկեղեցին, անկեալ առաջի պատրիարքին զոր Պապիոսն կոչեն, և պատմեաց զամենայն անցս աղետից իւրոց նա և զպատճառս գալոյն։ Յայնժամ կոչեաց երանելի Հայրապետն զրովանդակ ուխտ սրբոյ եկեղեցւոյն; և ասաց նոցա զամենայնն, և խնդրեաց ի նոցանէ այսպէս ասելով. Այրս այս դիմեալ յարեւելից մինչեւ ի մուտս արեւու՝ եկեալ եհաս առ մեզ՝ մեծափափագ և պինդ հաւատով. եկայք եղբարք, աղաչեսցուք զտէր Աստուած մեր՝ վասն սորա, և զսուրբ զԱռաքեալսն, զի բացցեն սմա զդուռն ողորմութեան գթութեանն Աստուծոյ, և ազատեսցեն զսա յայնպիսի դառն նեղութեան կապանաց[1]։

Աւետիքի արարքին պատմական ստուգութիւնը իր կարգին կարծես մեզի իրաւունք կու տայ ստուգելու և հաստատելու ուրիշ հետեւանք մ'ալ. այն է՝ թէ Աւետիք քահանայ եւս մէկն է Դաւիթ բէկի պատերազմներու պատմութեան թելադրողներէն, որով զինքն ալ կրնանք թուել Շահումեանի կարգին իբրեւ վկայ և պատմող աղբիւր. վասն զի չափազանց դժուար է որ Աւետիք Իտալիա եկած ըլլայ առանց

1. Հոս կը զետեղենք քանի մը տուն ալ նոյն պատմական դրուագին տաղաչափուած ձեւէն.

Իսկ անէծք և նզովքըն քահանային՝
Կապեալ ըղտանուտերն անզերծանելին.
Իսկ նա անփոյթ առնէր յիմարեալ հոգին,
Մինչեւ եհաս վախճան սուրբ քահանային.

Ապա որպէս թմրեալ ի բազում գինոյն՝
Ի միտս եկեալ ծանեաւ զպատիժ իւր հոգւոյն.
Բախէր զսիրտն և կոծէր ի բազում սըգոյն,
Վա՜յ և եղուկ կարդայր անձին իւրոյն.

Ելեալ առ վարդապետսըն շրջագայեալ՝
Դեղ անողջանալի վիրացըն հարցեալ.
Նոքա ամենեքեան զայս պատասխանեալ,
«Ոչ ուստեք չէք ճար՝ բայց այն որ կապեալ».

Եւ արք յիմաստնոց նոքա ասացին,
Գնալ ի յարեւմուտս՝ յերկիրըն Լատին,
Առ Պետրոս և Պօղոս աշակերտք փրկչին,
Մայրաքաղաքն ի Հռոմ՝ յաշխարհ Փռանգին.

«Զի նոցա ետ, ասեն, Տէրն՝ ըղքանալին
Երկնից արքայութեանըն յաւիտենին,
Եւ համարձակ խօսին հետ կենարարին,
Եւ միշտ բարեխօսեն վասն ում և կամին».

Զոր անյապաղ ելեալ և անդէն գընաց,
Ընդ ծով և ընդ ցամաք ճանապարհ հորդեաց.
Գնացեալ ի Հռոմ, լալով և երկըրպագեաց
Նըշխարացըն սրբոց Տեառն աշակերտաց.

Մըտեալ առ Պապն՝ ասաց զպատճառն երթալուն
Եւ ըղկապիլ նորա՝ յիւրմէ երիցուն.
Իսկ նա վաղվաղակի զուխտ եկեղեցուն
Կոչէ, և ասէ նոցա ըղգործ եկելուն.

Ասէ. թէ, «Աշխարհաւ ու ազգաւ սա Հայ է,
Եւ ի քահանայէն իւրմէ կապեալ է,
Եւ հաստատուն յուսով առ մեզ եկեալ է
Յերկար ճանապարհաւ, որ մին տարոյ է.

Ոտանաւորին հեղինակը յետ պատմելու նորման արժանի ըլլալը և Ս. Պետրոսի մասունքներէն մաս մը ձեռք ձգելը, կ'ըսէ թէ շատ նուէրներով կը դառնայ Հայաստան.

Եկեալ ի Կոզմիտ գաւառըն Սասնոյ,
Եւ զազատիչ հոգւոյն իւր և մարմնոյ՝
Եդ ի յեկեղեցինըն Գոմ Բըծայրոյ.
Եւ ինքն անդէն հանգեաւ ի փառս Աստուծոյ.

(Տե՛ս «Հայապատում» Ժ. Դար, Թ. 234, էջ 295–300 «Գիւտ մասին Սրբոյ առաքելոյ Պետրոսի, թէ զիարդ եղեւ կորուսմն կամ որպէս բերաւ ի Հայս» արձակ և ոտանաւոր դրուագները իրենց ընդարձակութեամբ։